4.- The need to finance the transition was a powerful incentive to reduce wasteful government spending. Prior to the reform, the government deliberately created a budget surplus, and for many years afterwards the treasury minister was able to use the need to “finance the transition” as a powerful argument to contain the permanent pressure from all sources to increase government expenditures.

5.- The increased economic growth fueled by the PRA system substantially increased tax revenues, especially those from the value-added tax.

2.-Քանի որ հաստատագրված հատկացումների համակարգում, ինչպիսին է ԱԿՀ-ն, համապատասխան կենսաթոշակի մակարդակը ֆինանսավորելու համար անհրաժեշտ խնայողությունների նորմերն ավելի ցածր էին, քան աշխատավարձի առկա հարկերը, նրանց միջև տարբերության մասը օգտագործվել էր որպես ժամանակավոր «անցումային հարկ» (որն աստիճանաբար կրճատվել էր՝ հասնելով զրոյի, նվազեցնելով վարձու աշխատանքի արժեքը և խթանելով ավելի շատ աշխատատեղերի բացմանը):

3.-Կառավարության հաշվեկշռի մեջ կան այնպիսի պարտավորություններ, ինչպիսիք են՝ սոցիալական ապահովության և առողջապահական պարտավորությունները, բայց կան նաև կառավարությանը պատկանող ձեռնարկություններ, հողեր և այլ տեսակի ակտիվներ: Քանի որ այդ ժամանակ մենք նույնպես մասնավորեցնում էինք կառավարությանը պատկանող ակտիվները, մասնավորապես՝ ընկերությունները, ինչն անցումը ֆինանսավորելու եղանակներից մեկն էր և ուներ մի քանի լրացուցիչ առավելություններ, ինչպիսիք են՝ արդյունավետության բարձրացումը, սեփականության ընդլայնումը և տնտեսության ապաքաղաքականացումը:

4.-Անցումը ֆինանսավորելու անհրաժեշտությունն ուժեղ խթան էր՝ կառավարության շռայլ ծախսերը նվազեցնելու համար: Մինչ բարեփոխումը, կառավարությունը դիտավորյալ ստեղծել էր բյուջեի ավելցուկ և դրանից հետո երկար տարիների ընթացքում ֆինանսների նախարարը կարողացել էր օգտագործել «անցումը ֆինանսավորելու» անհրաժեշտությունը՝ որպես հզոր փաստարկ՝ բոլոր աղբյուրներից կառավարական ծախսերը ավելացնելու դեմ մշտական ճնշումը զսպելու համար:

5.-Ավելացած տնտեսական աճը, որ խթանվում էր ԱԿՀ համակարգի կողմից, զգալիորեն ավելացրեց հարկերից ստացված հասույթները, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկերից ստացվածները:

The Results

Since the system began to operate on May 1, 1981, the average real return on investment has been 10.7 percent per year (during 21 years). Of course, the annual yield has shown the oscillations that are intrinsic to the free market—ranging from minus 3 percent to plus 30 percent in real terms—but the important yield is the average one over the working life of a person (say 40–45 years) or the full working plus retired life (say 55–60 years) if a person chooses the programmed withdrawal option.

Retirement benefits under the PRA system (with a mandatory savings rate of only 10 percent) have been significantly higher than under the old, state-administered system, which required a much higher payroll tax. According to one study, the average AFP retiree was receiving, after 15 years of operation of the system, a retirement benefit equal to 78 percent of his mean annual income over the previous 10 years of his working life. Upon retirement, workers may withdraw in a lump sum their “excess savings” (above the 70 percent of salary threshold). If that money were included in calculating the value of the retirement benefit, the total value would come close to 84 percent of working income. Recipients of disability retirement benefits also receive, on average, 70 percent of their working income.

The pension funds have already accumulated an investment fund equivalent of 55 percent of GNP, and some experts forecast that that percentage will rise to 100 percent of GNP when the system reaches full maturity. This long-term investment capital not only has helped fund economic growth but has spurred the development of efficient financial markets and institutions. The decision to create the PRA system first, and then privatize the large state-owned companies second, resulted in a “virtuous sequence.” It gave workers the possibility of

Արդյունքը

1981 թվականի մայիսի 1-ից՝ համակարգը գործելուց ի վեր, ներդրման միջին տարեկան իրական հատուցադրույքը կազմել է 10.7 տոկոս (21 տավա ընթացքում): Իհարկե, տարեկան շահութաբերությունը տատանվել է, որը բնորոշ է ազատ շուկային, իրական հաշվարկներով՝ մինուս 3 տոկոսից մինչև պլյուս 30 տոկոս, բայց կարևոր շահութաբերությունը անձի աշխատանքային ստաժի միջին շահութաբերությունն է (օրինակ՝ 40-45 տարի) կամ ամբողջ աշխատանքային ստաժը՝ գումարած թոշակի անցնելու ժամանակահատվածը (55-60 տարի), եթե անձն ընտրում է ծրագրավորված դրամական ելքերի տարբերակը:

ԱԿՀ համակարգի դեպքում ծերության նպաստները (պարտադիր խնայողությունների միայն 10% տոկոսադրույքի դեպքում) զգալիորեն ավելի բարձր են եղել, քան հին պետության կողմից ղեկավարվող համակարգի ժամանակ, որը պահանջում էր աշխատավարձի ավելի բարձր հարկ: Ըստ մեկ ուսումնասիրության՝ միջին ԿՀԿ համակարգին անցած թոշակառուն համակարգի գործելուց 15 տարի հետո ստանում էր ծերության նպաստ, որը հավասար էր իր աշխատանքային ստաժի վերջին 10 տարվա տարեկան միջին եկամտի 78 տոկոսին: Թոշակի անցնելուց հետո, աշխատողները կարող են միանվազ գումարով հաշվից հանել իրենց «հավելյալ խնայողությունները» (աշխատավարձի շեմի 70 տոկոսից բարձր): Եթե այդ գումարը ներառվեր ծերության նպաստի չափի հաշվարկման մեջ, ընդհանուր չափը կմոտենար աշխատանքային եկամտի 84 տոկոսին: Հաշմանդամության թոշակ ստացողները նույնպես ստանում են միջինում իրենց աշխատավարձի 70 տոկոսը:

Կենսաթոշակային հիմնադրամներն արդեն կուտակել են ներդրումային հիմնադրամ, որը հավասար է ՀԱԱ-ի 55 տոկոսին, և որոշ փորձագետներ կանխատեսում են, որ երբ համակարգն ամբողջովին հասունանա, այդ տոկոսային ցուցանիշը կաճի մինչ ՀԱԱ –ի 100 տոկոս: Այս երկարաժամկետ ներդրումային կապիտալը ոչ միայն օգնել է հիմնադրամի տնտեսական աճին, այլև խթանել է արդյունավետ ֆինանսական շուկաների և հաստատությունների զարգացմանը. նախ՝ ԱԿՀ համակարգ

benefiting handsomely from the enormous increase in productivity of the privatized companies by allowing workers, through higher stock prices that increased the yield of their PRAs, to capture a large share of the wealth created by the privatization process.

One of the key results of the new system has been, then, to increase the productivity of capital and thus the rate of economic growth in the Chilean economy. The vast resources administered by the AFPs have encouraged the creation of new kinds of financial instruments while enhancing others already in existence but not fully developed. Another of Chile's pension reform contributions to the sound operation and transparency of the capital market has been the creation of a domestic risk-rating industry and the improvement of corporate governance. (The AFPs appoint independent directors of the companies in which they own shares, thus shattering complacency at board meetings.)

The new social security system has made a significant contribution to the reduction of poverty by increasing the size and certainty of old-age, survivors', and disability benefits; by the indirect but very powerful effect of promoting economic growth and employment; and by eliminating the unfairness of the old system. According to conventional wisdom, pay-as-you-go schemes redistribute income from the rich to the poor. However, when certain income-specific characteristics of workers and the modus operandi of the political system are taken into account, those systems generally redistribute income to the most powerful groups of workers, who are obviously not the most vulnerable or poor.

ստեղծելու, այնուհետև՝ մեծ պետական ընկերությունները մասնավորեցնելու մասին որոշումները «բարեհաջող արդյունք» տվեցին: Դա աշխատողներին հնարավորություն տվեց մեծապես շահել մասնավորեցված ընկերությունների արտադրողականության հսկայական աճից՝ աշխատողներին թույլ տալով, բաժնետոմսերի ավելի բարձր արժեքների շնորհիվ, որոնք ավելացրել են իրենց ԱԿՀ շահութաբերությունը, ստանալ մասնավորեցման գործընթացից առաջացած գումարի ավելի մեծ բաժին:

Նոր համակարգի գլխավոր արդյունքներից մեկը եղել է կապիտալի արտադրողականության և նման կերպով Չիլիի տնտեսության տնտեսական աճի մակարդակի բարձրացումը: ԿՀԿ ընկերությունների կողմից կառավարվող հսկայական ռեսուրսները խթանել են նոր տեսակի ֆինանսական գործիքների ստեղծմանը միաժամանակ բարելավելով արդեն գոյություն ունեցող, սակայն լիովին չզարգացած մյուս ֆինանսական գործիքները: Չիլիի կենսաթոշակային ոլորտի բարեփոխման՝ կապիտալի շուկայի սահուն կառավարմանը և թափանցիկությանը նպաստող առավելություններից մեկն էլ տեղական ռիսկային ոլորտի ստեղծումն էր և կորպորատիվ կառավարման բարելավումը: (ԿՀԿ-ները նշանակեցին անկախ տնօրեններ այն ընկերություններում, որտեղ ունեն բաժնետոմսեր՝ այդպիսով թուլացնելով ինքնագոհությունը տնօրենների խորհրդի ժողովների ժամանակ):

Սոցիալական ապահովության նոր համակարգը նշանակալի դեր ունեցավ աղքատության նվազեցման հարցում՝ ավելացնելով ծերության, վերապրողի և անաշխատունակության նպաստների չափը և երաշխավորվածությունը՝ անուղղակի, բայց շատ հզոր ազդեցություն ունենալով տնտեսական աճի և աշխատունակության վրա և վերացնելով հին համակարգի անարդարությունը: Ըստ ընդունված տեսակետի՝ բաշխողական սխեմայի դեպքում եկամուտը վերաբաշխում է հարուստներից աղքատներին: Այդուհանդերձ, երբ հաշվի է առնվում աշխատավորների եկամուտներին բնորոշ հատկանիշները և քաղաքական համակարգի գործունեության ոճը, այդ համակարգերը սովորաբար եկամուտը

Social security issues in Chile have ceased to concentrate the energy and focus of the government, thus depoliticizing a huge sector of the economy and giving individuals more control over their own lives.

It is not surprising that the PRA system has survived intact four center-left governments, since it really has become the “third rail” of Chilean politics. Not only has it been untouched in its structural design, but some technical adjustments have improved it, for example, by allowing more competition in the management of voluntary retirement savings and enlarging the choices of funds from one to five.

When the PRA system was inaugurated in May 1981, one-fourth of the eligible workforce signed up in the first month of operation alone, and today 95 percent of covered Chilean workers are in the PRA system. When given a choice, Chilean workers have voted with their money overwhelmingly for a free-market-based retirement system.

For Chileans, their PRAs now represent real and visible property rights—indeed they are the primary sources of security for retirement, and the typical Chilean worker’s main asset is not his used car or even his small house (probably still mortgaged) but the capital in his PRA. The new social security system has given Chileans a personal stake in the economy. A typical Chilean worker is not indifferent to the behavior of the stock market or interest rates. He knows that a bad economic policy can harm his retirement benefits. When workers feel that they themselves own a part of their country’s assets, not through

վերաբաշխում են աշխատավորների ամենահզոր խմբերին, որոնք ակնհայտորեն ամենախոցելի կամ աղքատը չեն:

Չիլիում սոցիալական ապահովության հարցերը վերջ դրեցին կառավարության ջանքերին և ուշադրությանը՝ այդպիսով ապաքաղաքականացնելով տնտեսության հսկայական հատվածը և հնարավորություն տալով անհատներին ավելի շատ վերահսկել իրենց սեփական կյանքը:

Չարմանալի չէ, որ ԱԿՀ համակարգը կարողացել է անփոփոխ պահպանվել ձախամետ չորս կառավարության դեպքում, քանի որ դա իսկապես դարձել էր չիլիական քաղաքականության «երրորդ ռեյլը»: Այն ոչ միայն անփոփոխ էր մնացել իր կառուցվածքային նախագծի առումով, այլև նույնիսկ որոշ տեխնիկական շտկումներ ավելի են բարելավել այն, օրինակ՝ ավելի շատ մրցունակություն են ապահովել կենսաթոշակային կամավոր խնայողությունների կառավարման մեջ և ընդլայնել հիմնադրամների ընտրությունը՝ մեկից հասցնելով հինգի:

Երբ 1981 թվականի մայիսին ԱԿՀ համակարգը ուժի մեջ մտավ, միայն համակարգի գործարկման առաջին ամսվա ընթացքում համապատասխան աշխատուժի մեկ-չորրորդը անդամագրվել էր համակարգին, իսկ այսօր Չիլիի ապահովագրված աշխատավորների 95 տոկոսը ԱԿՀ համակարգի անդամ է: Երբ տրվեց ընտրության հնարավորություն, չիլիացի աշխատավորները գումարների տեսքով մեծ մասամբ քվեարկեցին ազատ շուկայական հիմքով թոշակային համակարգի օգտին:

Չիլիացիների համար իրենց ԱԿՀ-ները հիմա ներկայացնում են իրական և տեսանելի սեփականության իրավունքներ. իրականում նրանք թոշակի անցման համար ապահովվածության առաջնահերթ աղբյուրներ են, իսկ չիլիացի տիպիկ աշխատավորի համար հիմնական ունեցվածքը ո՛չ նրա օգտագործված ավտոմեքենան է, ո՛չ էլ նույնիսկ իր փոքրիկ տունը (որը թերևս դեռ գրավի տակ է), այլ իր ԱԿՀ կապիտալը: Սոցիալական ապահովության նոր համակարգը չիլիացիներին տնտեսության մեջ անձնական շահագրգռվածություն

party bosses or a Politburo, they are much more attached to the free market and a free society.

The overwhelming majority of Chilean workers who chose to move into the new system freely decided to abandon the government system even though some of the national trade union leaders and most of the political class advised against it. I have always believed that common workers care deeply about and pay a lot of attention to matters close to their lives, such as social security, education, and health, and make their decisions for the well-being of their families, not according to political allegiances or collectivist ideologies.

The ultimate lesson of the Chilean experience is that the only revolutions that are successful are those that trust the individual and the wonders that individuals can do when they are free.

Epilogue

Why first in Chile? What was the political context? How did you manage to do it? Those are invariably the first questions I am asked whenever I explain the Chilean social security reform in my travels around the world. So let me answer them briefly here.

It all began in 1956 when the Faculty of Economic Sciences of the Catholic University

ունենալու հնարավորություն տվեց: Տիպիկ չիլիացի աշխատավորն անտարբեր չէ արժեթղթերի շուկայի կամ տոկոսադրույքի նկատմամբ: Նա գիտի, որ վատ տնտեսական քաղաքականությունը կարող է վնասել իր կենսաթոշակային վճարին: Երբ աշխատավորներն զգում են, որ իրենք անձամբ տիրապետում են իրենց երկրի ունեցվածքի մի մասին, ոչ թե կախված են լինում կուսակցության ղեկավարներից կամ Պոլիտբյուրոյից, նրանք ավելի շատ են կապված լինում ազատ շուկային և ազատ հասարակությանը:

Չիլիացի աշխատավորների մեծ մասը, ովքեր ընտրել էին նոր համակարգին անցում կատարել, ազատորեն որոշում կայացրին հրաժարվել կառավարական համակարգից՝ չնայած այն փաստին, որ ազգային արհմիության առաջնորդներից ոմանք և քաղաքական գործիչների մեծ մասը դեմ էին արտահայտվել դրան: Ես միշտ հավատացել եմ, որ հասարակ աշխատավորները շատ են հոգ տանում և մեծ ուշադրություն են դարձնում իրենց կյանքին վերաբերող այնպիսի հարցերին, ինչպիսիք են՝ սոցիալական ապահովությունը, կրթությունը, առողջությունը, և որոշումներ են կայացնում իրենց ընտանիքների բարեկեցության համար՝ ոչ ըստ քաղաքական պատկանելիության կամ կոլեկտիվ գաղափարախոսության:

Չիլիի փորձի վերջին դասը հետևյալն է. հաջողված հեղափոխությունները նրանք են, որ հավատում են անհատին և այն հրաշքներին, որ անհատը կարող է իրագործել, երբ ազատ է:

Վերջաբան

Ինչու՞ դա առաջինը կիրառվեց Չիլիում: Ո՞րն էր քաղաքական իրավիճակը: Ինչպե՞ս դա Ձեզ հաջողվեց: Սրանք ինձ տրվող մշտական այն առաջին հարցերն էին, երբ աշխարհի շուրջ իմ ճանապարհորդությունների ընթացքում փորձում էի բացատրել չիլիական սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումը: Թույլ տվեք տալ դրանց հակիրճ պատասխանները:

Այդ ամենն սկսվեց 1956 թվականին, երբ Չիլիի Կաթոլիկ համալսարանի տնտեսական

of Chile signed a three-year agreement of cooperation with the Department of Economics of the University of Chicago. The agreement was renewed twice, for a total of nine years. The extraordinary transfer of ideas that took place created the best economics faculty in Latin America. In the 1960s hundreds of students such as myself were learning rigorous economics and discovering public policy ideas based on individual freedom and private enterprise.

Soon there was a critical mass of free-market economists, with a common diagnosis of the country's economic problems and similar views on the needed solutions. Since ideas have consequences, this group began to influence the public debate and began to be referred to as the "Chicago Boys." When I got my economics degree in Chile in 1970, I decided that after four years of intensive and rewarding study in a faculty that, from an intellectual point of view, was a "wholly owned subsidiary" of the University of Chicago, it would be enriching to go to another university for my postgraduate studies. So, breaking tradition, I went to Harvard University for my M.A. and Ph.D. in economics. Years later, when I was already a minister, some newspapers began calling me a "Chicago Boy" but a "Harvard Man." I am really proud of being both.

In my four years in Cambridge (Massachusetts), not only did I deepen my knowledge of economics and other social sciences, but I immersed myself in the exhilarating climate of freedom of American society. In search of the ultimate causes of the success of America, I became a passionate admirer of the Founding Fathers and their two great legacies to all the world: the Declaration of Independence and the Constitution of the United States. I also found great inspiration in the works of thinkers

գիտությունների ֆակուլտետը Չիկագոյի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հետ կնքեց համագործակցության եռամյա պայմանագիր: Պայմանագիրը երկու անգամ երկարացվեց և տևեց ընդհանուր առմամբ ինը տարի: Գաղափարների արտասովոր փոխանակումն ստեղծեց լավագույն տնտեսագիտական բաժինները Լատինական Ամերիկայում: 1960-ական թվականներին հազարավոր ուսանողներ, ինչպես և ես, մանրամասն ուսումնասիրում էինք տնտեսագիտությունը և հայտնագործում հասարակական քաղաքականության գաղափարներ՝ հիմնված անհատական ազատության և անհատ ձեռներեցության վրա:

Շուտով ի հայտ եկավ ազատ շուկայի տնտեսագետների մի սովոր խումբ, որոնք երկրի տնտեսական խնդիրներին տալիս էին ընդհանուր վերլուծություններ և պահանջվող լուծումների վերաբերյալ ունեին միանման մոտեցումներ: Քանի որ գաղափարներն անհետևանք չէին, այս խումբն սկսեց ազդել հասարակական քննարկումների վրա և անվանվեցին «Չիկագոյի տղաներ»: Երբ 1970 թվականին Չիլիում ես ստացա տնտեսագետի կոչում, որոշեցի, որ այս ֆակուլտետում չորս տարի ինտենսիվ և օգտակար ուսուցումից հետո, որն ինտելեկտուալ տեսանկյունից Չիկագոյի համալսարանի «ամբողջովին սեփական բաժինն» էր, գիտելիքները հարստացնելու նպատակով ասպիրանտուրայի համար լավ կլինեք ուսանել այլ համալսարանում: Այսպիսով, խախտելով սովորույթը, ընդունվեցի Հարվարդի համալսարան՝ գիտությունների մագիստրոսի և դոկտորի կոչումների համար: Տարիներ անց, երբ ես արդեն նախարար էի, որոշ թերթեր սկսեցին ինձ անվանել «Չիկագոյի տղա» և «Հարվարդի շրջանավարտ»: Ես, իրոք, երկու կոչումների համար էլ հպարտ եմ:

Քենբրիջում (Մասաչուսեթս) ուսանած չորս տարիվա ընթացքում ես ոչ միայն խորացրի իմ տնտեսագիտական և սոցիոլոգիական գիտելիքները, այլև տարվեցի ամերիկյան հասարակության զվարթ ազատությամբ: Ամերիկայի հաջողության հիմնական պատճառների փնտրողների ժամանակ ես դարձա «հիմնադիր հայրերի» և ամբողջ աշխարհին հայտնի՝ նրանց երկու ժառանգությունների՝ Անկախության դեկլարացիայի և Միացյալ Նահանգների

on liberty such as John Locke, Adam Smith, Frederic Bastiat, Friedrich Hayek, Karl Popper, Ludwig von Mises, and Milton Friedman (in whose 1962 book, *Capitalism and Freedom*, I first read about the idea of privatizing social security). During those years, I became convinced that only fundamental economic and political reforms based on individual freedom could deliver my country from poverty and all forms of oppression.

In the meantime, the communist takeover of Cuba in 1959 and its government's efforts to create, in the words of Che Guevara, "multiple Vietnams" in Latin America, led ultimately to the breakdown of democracy in Chile. Soon after, the new military government decided to invite some of the "Chicago Boys" to help reconstruct a destroyed economy and the real revolution began in Chile: a radical, comprehensive, and sustained move toward free markets. This "Chilean Revolution" doubled Chile's historic rate of economic growth (to an average of 7 percent a year from 1984 to 1998), drastically reduced the proportion of people living in poverty, and unleashed the forces that brought liberal democracy and the rule of law.

At the end of 1974, I faced a very difficult choice: remain in Boston enjoying the academic life I loved so much or go back to help found a new country from the ashes of the old one. When I went back, I knew the road ahead was full of dangers and risks. Almost immediately, I became very active in promoting the ideas of economic, social, and political liberty in public debate. Two years later, in 1977, I gave a speech in which I described a possible future for the country should we choose to make a dash for economic freedom. The next day, I was invited by the president, whom I had never met before, to repeat the speech to him and the full

սահմանադրության ջերմ երկրպագուն: Մեծ ներշնչանք գտա նաև ազատության այնպիսի մտածողների աշխատությունների մեջ, ինչպիսիք են՝ Ջոն Լոքը, Ադամ Սմիթը, Ֆրեդերիկ Բասթիատը, Ֆրիդրիխ Հայեկը, Կարլ Պոպերը, Լյուդվիգ վոն Միսեսն և Միլթոն Ֆրիդմանը (որի 1962 թ. գրված «Կապիտալիզմը և ազատությունը» գրքում, առաջին անգամ կարդացի սոցիալական ապահովագրությունը մասնավորեցնելու մասին): Այս տարիների ընթացքում ես ավելի քան համոզվեցի, որ միայն անհատական ազատության վրա հիմնված արմատական տնտեսական և քաղաքական բարեփոխումները իմ երկիրը կհանեն աղքատությունից և կվերացնեն ճնշման ձևերի բոլոր դրսևորումները:

Միևնույն ժամանակ 1959թ. կոմունիստների կողմից Կուբայի իշխանության ստանձնումը և այդ կառավարության ջանքերը Չե Գուեվարայի բառերով՝ Լատինական Ամերիկայում «բազմաթիվ Վիետնամներ» ստեղծելու, վերջնականապես տարան Չիլիում ժողովրդավարության անկման: Շուտով նոր զինվորական կառավարությունը որոշեց «Չիկագոյի տղաներ»-ից ոմանց հրավիրել՝ օգնելու վերակառուցել ոչնչացված տնտեսությունը, և Չիլիում սկսվեց իսկական հեղափոխություն՝ արմատական, համակողմանի և երկարատև շարժ դեպի ազատ շուկաներ: Այս «Չիլիական հեղափոխությունը» կրկնակի բարձրացրեց Չիլիի տնտեսական աճի պատմական ցուցանիշը (1984-1998 թվականներին՝ տարեկան միջինը 7 տոկոս), զգալիորեն նվազեցրեց անապահովների թիվը և ազատեց այն ուժերը, որոնք բերեցին լիբերալ ժողովրդականության և իրավունքի նորմայի:

1974 թվականի վերջին ես կանգնած էի լուրջ ընտրության առջև. կամ մնալ Բոստոնում և զբաղվել ինձ համար այդքան հաճելի ակադեմիական գործերով, կամ վերադառնալ հետ՝ օգնելու հին հայրենիքի մոխիրներից նոր երկիր հիմնելուն: Երբ վերադարձա, գիտեի, որ ինձ սպասող նոր ուղին լի է վտանգներով և ռիսկերով: Գրեթե անմիջապես՝ հանրային քննարկումների ընթացքում, շատ ակտիվ սկսեցի առաջ քաշել տնտեսական, սոցիալական և քաղաքական ազատությանը վերաբերող գաղափարներ: Երկու տարի անց՝ 1977թ., ես մի գեկույց կարդացի, որտեղ ներկայացրի երկրի հնարավոր ապագան, եթե

cabinet, and in December 1978, I became Chile's secretary of labor and social security with two big goals: creating a new social security system and reforming the rigid and anti-employment labor law of my country.¹⁰

My ideas for social security reform were then part of an overall vision of a free market and a free society in Chile. At the ministry, I assembled an excellent team to help me design not only the new system but also a transition strategy. For decades in Chile, those striving for social security reform had failed, because their plans were partial and flawed. I decided that we should “take the bull by the horns.” My motto was that we needed a “radical reform with a conservative execution.” I remember often reiterating to my team that there was nothing as satisfying in life as to do something others deem impossible. We were bound together by our faith in the power of ideas and by the conviction that we could make a difference for millions of Chilean workers.

During my two years in the ministry, I divided my seven-day workweek equally between excruciating work with my team, perfecting every detail of the reform project, and educating people on the values and logic of those ideas. I had countless meetings with workers across the country, and I began a weekly, three-minute explanation of the reform on one of the prime-time TV news programs. Those TV appearances, promoting the reform in the most simple and truthful terms, were crucial to building the popularity of pension reform among the nation's workers.

մենք ընտրենք տնտեսական ազատության համար որոշիչ քայլեր ձեռնարկելու ուղին: Հաջող օրն ինձ հրավիրեց նախագահը, ում երբևէ չէի հանդիպել, որպեսզի իր և ամբողջ ապարատի մոտ նորից կարդամ իմ զեկույցը և 1978թ. դեկտեմբերին ես դարձա Չիլիի աշխատանքի և սոցիալական ապահովության հարցերով քարտուղար՝ ունենալով երկու մեծ նպատակ՝ ստեղծել իմ երկրի սոցիալական ապահովության նոր համակարգ և աշխատանքային օրենսգիրք:

Սոցիալ-ապահովության վերաբերյալ իմ գաղափարներն այդ ժամանակ Չիլիում ազատ շուկայի և ազատ հասարակության համընդհանուր կանխատեսումներ էին: Նախարարությունում ես հավաքել էի մի հիանալի խումբ՝ օգնելու ինձ ձևավորել ոչ միայն նոր համակարգը, այլև անցումային ռազմավարությունը: Տասնամյակներ շարունակ Չիլիում սոցիալական ապահովության բարեփոխումների ձգտողները հաջողության չէին հասել, քանի որ նրանց պլանները մասնակի և թերի էին: Ես որոշեցի, որ պետք է հարվածել նշանակետին: Իմ նշանաբանն էր. «Արմատական բարեփոխում պահպանողական կատարմամբ»: Հիշում եմ, որ հաճախ կրկնում էի իմ քիմակիցներին, որ կյանքում չկա ավելի գոհացնող բան, քան անել այն, ինչը շատերին անհնար է թվում: Մեզ միացնում էր մեր գաղափարների ուժի նկատմամբ հավատը և այն համոզմունքը, որ մենք կարող ենք միլիոնավոր չիլիացի աշխատավորների համար փոփոխություն կատարել:

Նախարարությունում աշխատած երկու տարվա ընթացքում աշխատանքային յոթօրյա շաբաթը հավասարապես բաժանել էի երկու մասի. քիմակիցներիս հետ տքնաջան աշխատանքը՝ ուղղված բարեփոխման նախագծի յուրաքանչյուր դետալը կատարյալ դարձնելուն, և մարդկանց այդ գաղափարների արժեքները և դրանց տրամաբանությունը սովորեցնելուն: Երկրով մեկ բազմաթիվ հանդիպումներ եմ ունեցել աշխատավորների հետ և լրատվական ծրագրերից մեկով մեծ հեռուստալսարան ունեցող ժամերին սկսեցի շաբաթական երեք րոպե տևողությամբ բացատրել բարեփոխման մասին: Հեռուստաէկրանով այս ելույթները, որոնց միջոցով ամենապարզ և իրական եղանակներով տարածվում էր բարեփոխման գաղափարը, էական դեր խաղացին մեր ազգի աշխատավորների շրջանում կենսաթոշակային

Let me share two revealing anecdotes regarding the temptations a reformer faces and must avoid. At some moment, it seemed very likely that the pension reform would finally be approved, as the idea was gaining support everywhere. But some special interest groups thought they could hash out some last-minute compromises. One day, I was petitioned to attend, by myself, a closed-door meeting with the top union leaders of the country. After a round of cordial greetings, their spokesman explained that, although they were ideologically opposed to the reform, they knew that it was likely to be passed. “We have come to suggest to you that our support could be helpful in the future. After all, you are a young man of 30, maybe with a promising political career in front of you. . . . So, we are willing to immediately give you our public support, as long as you are reasonable and modify a single detail in your project: instead of giving workers the right to choose the manager of their individual accounts, it should be the exclusive decision of the directors of the unions to which workers belong.” He continued: “The workers, Mr. Minister, do not know how to make a decision of that nature. If we can come to an agreement about this, we will be very pleased to be of use to you in the future.”

I must confess to having been surprised, not only by the brazen nature of the offer, but also by the Olympian contempt they showed for the freedom and dignity of the workers. In formulating a response, I opted for humor. “Unfortunately, I cannot accept the offer that you have come to tender, because I am concerned with saving your souls.” “How is that, by God?” shouted several of them at the same time. “It’s just as you heard it, gentlemen. As we all know, union leadership in our country has always been highly politicized, but it is not corrupt. If the manager selection becomes a

բարեփոխման նկատմամբ համակրանք առաջացնելու համար:

Թույլ տվեք պատմել երկու անեկդոտ այն գայթակղությունների վերաբերյալ, որոնք հանդիպում են ռեֆորմատորներին և որոնցից նա պետք է խուսափի: Մի պահ թվում էր, որ վերջապես կենսաթոշակային բարեփոխումը կհաստատվի, քանի որ այդ գաղափար ամենուր արժանանում էր օժանդակության: Բայց մի քանի հատուկ հետաքրքրված խմբերի թվում էր, թե նրանք կարող են վերջին վայրկյանին քննարկել փոխգիջումները: Մի օր ինձ խնդրել էին մասնակցել փակ դռներով հանդիպման՝ երկրի արհմիության ղեկավարների հետ: Ջերմ ողջույններից հետո նրանց խոսնակը բացատրեց, որ չնայած նրանք գաղափարապես դեմ են բարեփոխմանը, բայց գիտեն, որ հնարավորությունը մեծ է, և այն կընդունվի: «Եկել ենք այստեղ՝ Ձեզ առաջարկելու մեր օժանդակությունը, որն ապագայում շատ օգտակար կլինի: Վերջապես դուք երիտասարդ՝ 30 տարեկան անձնավորություն եք և հնարավոր է՝ խոստումնալից քաղաքական կարիերայով . . . Այսպիսով, մենք ցանկանում ենք անմիջապես Ձեզ տալ մեր հանրության օժանդակությունը, եթե Դուք խելամիտ գտնվեք և նախագծի մեջ փոխեք մի դետալ. «Աշխատավորներին տալ իրավունք՝ ընտրելու իրենց անհատական հաշիվների ղեկավար»-ի փոխարեն լինի «Դա կլինի արհմիության տնօրենների բացառիկ որոշում»-ը, որին պատկանում են աշխատավորները: Հետո նա շարունակեց. «Աշխատավորները, պրն նախարար, չգիտեն՝ ինչպես այդ կարգի որոշումներ կայացնեն: Եթե մենք կարողանանք համաձայնության գալ այս հարցի շուրջ, շատ գոհ կլինենք Ձեզ ապագայում օգտակար լինելու համար»:

Պետք է խոստովանեմ, որ զարմացած էի ոչ միայն առաջարկի անամոթությամբ, այլև օլիմպիական արհամարհական վերաբերմունքով, որը նրանք ցուցաբերեցին աշխատավորների ազատության և արժանապատվության հանդեպ: Պատասխանը ձևակերպելիս ես ընտրեցի հումորը. «Դժբախտաբար, ես չեմ կարող ընդունել Ձեր առաջարկը, քանի որ ես մտահոգված եմ Ձեր հոգիները փրկելով»: «Այդ ինչպե՞ս, աստված սիրես», - միառժամանակ բացականչեցին նրանցից մի քանիսը: «Հենց այն, ինչ լսեցիք, պարոնա՛յք: Ինչպես մենք բոլորս գիտենք,

union leader decision-as opposed to one made by each worker-you directors would be inundated by so many pressures that it would not be easy to maintain your integrity. The pension managers, who would love to manage the retirement savings of large groups, will find it much cheaper to corrupt union officials than to compete for the accounts in the free market by offering better returns or lower commissions. I will not accept that, because it will lend itself to temptations which none of you would want to face.” Nobody raised his voice after that. The meeting was quietly adjourned, though much less cordially than it had begun.

The next visit was that of the chairmen of the most powerful banks in Chile. They told me they fully supported the concept of private individual retirement accounts, but that they wanted the system to be managed only by the banks. One of them even made an impassioned argument against allowing “foreign” financial institutions to manage the workers’ retirement savings. As I had the trade union leaders’, I pondered their arguments but rejected their position completely. Competition was crucial to providing good service. And it was out of the question for me to restrict workers’ choices to grant Chilean financial businessmen a monopoly on managing the system. I knew I was creating adversaries, but there is nothing more dangerous than diluting the coherence of a reform in order to please those with vested interests. It is not only moral and intellectual dishonesty, but also very bad policy.

Those two meetings reminded me of Thomas Jefferson’s words, which had been engraved on my mind and soul since I first read them: “Whenever a man casts a longing eye on public office, a rot begins in his conduct.” The key

արհմիության ղեկավարությունը մեր երկրում միշտ չափազանց քաղաքականացվել է, բայց կոռումպացված չի եղել: Եթե մենեջերի ընտրությունը դառնում է արհմիության ղեկավարների որոշումը՝ հակառակ յուրաքանչյուր աշխատավորի կայացրած որոշման, դուք՝ տնօրեններդ, կենթարկվեք այնպիսի ճնշման, որ դժվար կլինի պահպանել ձեր ազնվությունը: Թոշակի հարցերով զբաղվող մենեջերները, որոնք կցանկանան ղեկավարել մեծ խմբերի թոշակային խնայողությունները, ավելի էժան կհամարեն կաշառել արհմիության ղեկավարներին, քան մրցել ազատ շուկայում՝ հաշիվների հետ առաջարկելով ավելի լավ եկամուտ կամ ցածր տոկոսներ: Ես չեմ ընդունի դա, քանի որ դա կտանի գայթակղության, որը Չեզնից ոչ մեկը չի ուզի»: Դրանից հետո ոչ ոք ձայն չհանեց: Հանդիպումն անձայն ավարտվեց, չնայած ոչ այնքան ջերմորեն, ինչպես սկսվել էր:

Հաջորդն այցելեցինք Չիլիի ամենահզոր բանկի նախագահին: Նրանք ասացին, որ ամբողջապես սատարում են մասնավոր անհատական թոշակային հաշիվների գաղափարը, բայց և ուզում են, որ այդ համակարգը լինի միայն բանկի կառավարման տակ: Նրանցից մեկը նույնիսկ դեմ արտահայտվեց «օտար» ֆինանսական հաստատությունների կողմից աշխատավորների կենսաթոշակային խնայողությունները կառավարելուն: Քանի որ արհմիության ղեկավարների օրինակն ունեի, ես քննարկեցի նրանց փաստարկները, բայց մերժեցի դիրքորոշումը: Լավ ծառայություն մատուցելու համար մրցակցությունը վճռական էր: Հարց անգամ չէր կարող լինել այն մասին, որ ես սահմանափակեի աշխատավորների ընտրությունը՝ չիլիացի ֆինանսական գործարարին համակարգը ղեկավարելու մենաշնորհը տալու համար: Գիտեի, որ թշնամիներ են ձեռք բերում, բայց չկար ավելի վտանգավոր բան, քան բարեփոխումը հաջորդականությունից զրկելը՝ հետաքրքրված օղակներին գոհացնելու համար: Դա ոչ միայն մտավոր և ինտելեկտուալ անազնվություն էր, այլև վատ քաղաքականություն:

Այս երկու հանդիպումներն ինձ հիշեցրին Թոմաս Չեֆերսոնի բառերը, որոնք առաջին անգամ կարդալուց հետո քափանցել են մտքիս և հոգուս մեջ. «Երբ մարդն անկուշտ աչքերով է նայում պաշտոնին, վարքը դառնում

phrase here is “a longing eye,” by which Jefferson distinguished between the necessary role of public men and the illegitimate desire to hold office for its own sake. That wise man saw the need for real leadership in order for a republic to survive and prosper. But he also illuminated clearly the difference between leadership and the mere quest for power.

On November 4, 1980, the reform was finally approved. The law gave the pension fund companies six months to start up, which would have set May 4 as the date. An idea suddenly hit me: to move the inauguration date up to May 1, the international Labor Day. It is a date that historically has had a special meaning for workers but that regrettably had been turned into an occasion for protest fueled by the rhetoric of class warfare. For Chile in the future, I foresaw that day as one of celebration of a reform that gave freedom and dignity to our nation’s workers.

With this minor adjustment approved, I rushed to my office to share the good news with the rest of the team. In the midst of all the cheering, a voice broke through the noise: “We did it! We took the bull by the horns! Viva Chile!” I arrived home very late that evening. I was extremely happy but completely exhausted. To relax, I turned on the TV news. They were announcing the breaking news that Ronald Reagan had just been elected president of the United States. As I slept that night, my dreams were filled with hope for Chile and hope for the world.

է անհետք»։ Գլխավոր արտահայտությունն այստեղ «անկուշտ աչքեր»-ն է, որով Ջեֆերսոնը բնութագրում է հասարակական գործչի անհրաժեշտ դերը և սեփական շահերի համար պաշտոն զբաղեցնելու անօրինական ցանկությունը։ Այդ իմաստուն մարդն զգացել է, որ հանուն հանրապետության բարգավաճման և պահպանման անհրաժեշտ է իսկական ղեկավար։ Նա նաև պարզորոշ կերպով լուսաբանել է տարբերությունը ղեկավարելու և լոկ իշխանությանը ձգտելու միջև։

1980 թվականի նոյեմբերի 4-ին բարեփոխումը վերջնականապես հաստատվեց։ Օրենքը կենսաթոշակային հիմնադրամներին սկզբի համար 6 ամիս ժամանակ տվեց, իսկ ժամկետը սահմանվեց մայիսի 4-ը։ Հանկարծ գլխումս մի միտք ծագեց. բացման ժամկետը տեղափոխել մայիսի 1, երբ նշում են աշխատավորների միջազգային օրը։ Սա մի ամսաթիվ է, որը պատմականորեն հատուկ նշանակություն ուներ աշխատավորների համար, որը, ցավոք, վերածվել էր բողոքի, սնվելով դասակարգային պատերազմի կարգախոսով։ Ապագա Չիլիի համար այս օրը կանխատեսում էի որպես այնպիսի բարեփոխման տոնակատարություն, որն ազատություն և արժանապատվություն կտար մեր ազգի աշխատավորներին։

Երբ հաստատվեցին այս փոքր շտկումները, վազեցի գրասենյակ՝ լավ լուրը թիմակիցներիս հետ կիսելու համար։ Ուրախության ժամանակ աղմուկի միջից լսեցինք մի ձայն. «Մենք արեցինք դա, մենք հարվածեցինք նշանակետին, կեցցե՛ Չիլին»։ Այդ երեկո տուն եկա շատ ուշ։ Չափազանց երջանիկ էի, բայց և ուժասպառ։ Հանգստանալու համար միացրի հեռուստացույցը՝ լուրեր լսելու։ Հեռուստատեսությամբ հայտնեցին հրատապ լուր այն մասին, որ Ռոնալդ Ռեյգանը դարձել էր Միացյալ Նահանգների նախագահ։ Գիշերը քնեցի և իմ երազները լի էին հույսով Չիլիի և աշխարհի հանդեպ։